ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել « ԼՐԱՑՈՒՄ ԵՎ » բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները:
2. Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության հաշվետվության մեջ պետք է ներկայացնեն **տարեկան մուտքերի (դրամական և/կամ գույքային) ընդհանուր գումարը և օգտագործված դրամական միջոցները և/կամ գույքը:** Վերոնշյալ կարգավորման առնչությամբ գտնում ենք, որ այն խնդրահարույց կարող է լինել այն դեպքերում, երբ Կազմակերպությունները անհատույց ստանում են գույք, որի դրամական արժեքը արտացոլված չի լինում պայմանագրում, հետևաբար, գործունեության հաշվետվություններում Կազմակերպությունների կողմից պահանջվող տեղեկատվությունը լրացնելու ժամանակ կարող են լրացուցիչ խնդիրներ առաջանալ:
3. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «և դրա արդյունքում ստացված շահույթի օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը» բառերը փոխարինել «և Կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ օգտագործված շահույթի վերաբերյալ տեղեկատվությունը» բառերով՝ հաշվի առնելով Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: